



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 299 - Ա

09 օգոստոսի 2019 թ.

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման N 1 հավելվածի աղյուսակի 4-րդ կետը /փոփոխություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 18-ի N 909-Ն որոշում/

**Կարգադրում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղի սպասարկումը Ճամբարակի սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը հանձնելու նպատակով՝ Վարդենիսի և Ճամբարակի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների միջև համապատասխան փաստաթղթերի հանձնման և ընդունման աշխատանքները կազմակերպելու համար, ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

- Դվոյան Սևակ - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
- Հովհաննիսյան Ռիտա - Ճամբարակի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ
- Դավթյան Արթուր - Վարդենիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ
- Ամիրխանյան Հրանտ - Վարդենիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կրտսեր մասնագետ
- Հարությունյան Գոռ - Ճամբարակի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կրտսեր մասնագետ

**2. Հանձնաժողովին՝**

- 1) հանձնման և ընդունման աշխատանքների արդյունքները մեկ շաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին.

